ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09.12.3/17345-2026

«13» 07 2026թ

«ԱՐՄՈՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(հեռ.՝ +374 93 94 11 11, Էլ. հասցե՝ info@armon.am)

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացված 2026 թվականի մայիսի 22-ի գրության՝ «Արմոն» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված թափոնների կառավարման ոլորտում «ADS ECO արդյունաբերական համալիր» ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վերաբերյալ, հայտնում ենք հետևյալը:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ողջունում է նման նախաձեռնությունները և կարևորում Ծրագրի իրականացումը, քանի որ այն կնպաստի թափոնների կառավարման համակարգի զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրմանն ու զարգացմանը, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավմանը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Նախարարությունը ներկայումս իրականացնում է պետական աջակցության մի շարք ծրագրեր, որոնց պայմաններին համապատասխանելու դեպքում Ընկերությունը կարող է օգտվել դրանց շրջանակում նախատեսված աջակցության գործիքներից:

Նախարարությունը նաև պատրաստակամ է, անհրաժեշտության դեպքում, կազմակերպել հանդիպում կամ աշխատանքային քննարկում՝ Ծրագրի իրականացման ընթացքի, համագործակցության հնարավոր ուղղությունների, ինչպես նաև պետական

աջակցության գործող և այլ կիրառելի գործիքների օգտագործման հնարավորությունների քննարկման նպատակով:

Հարգանքով՝

ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ

Կատարող՝
Ներդրումային ծրագրերի համակարգման և աջակցման բաժնի գլխավոր մասնագետ, Ելենա Ասլանյան
011597259